ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Հիմնաբառեր. *մրցակցություն, մրցակցային միջավայր, բազմակողմ համագործակցություն, տնտեսական համագործակցություն, մրցակցություն պաշտպանություն, հակամրցակցային գործունեություն*

Մրցակցային միջավայրում մակրոտնտեսական նորմատիվային կարգավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս ոչ միայն ծրագրավորել գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման ուղիները, այլև գնահատել արդյունավետության բարձրացման հնարավորությունների բացահայտման լծակների համակարգը: Հետևողական և բազմակողմանի մշտադիտարկման արդյունքները, բարելավվելով մրցակցային միջավայրի կարգավորման մարմինների կողմից, կարող են նոր լույս սփռել տնտեսության ողջ ճյուղային կառուցվածքը ձևավորող մասնակիցների գործունեության նորմատիվային կարգավորման վրա:

Տնտեսության մրցակցային միջավայրի պետական կարգավորման ու տնտեսության զարգացման ընդհանուր առանձնահատկություններից բխող բազմաթիվ զարգացման ծրագրերի մշակման, հաստատման ու իրականացման գործընթացներն ուղեկցվում են տնտեսական պայմանների միջավայրում գործող նորմերի ու նորմատիվների կիրառման զուգակցմամբ: Տնտեսական պայմանների փոփոխությունը դիտարկվում է որպես տնտեսության պետական կարգավորման նորմերի և նորմատիվների փոփոխման ու լրացումների կատարման, նորերի առաջացման կամ չգործողի ու համապատասխան միջավայրի բացակայության արդյունքում դադարեցման նախադրյալ՝ չանտեսելով վերջիններիս ժամկետայնության սկզբունքը: Տնտեսության պետական մակրոկարգավորման նորմերի և նորմատիվների համակարգն իր վրա է կրում ժամանակակից շուկայական տնտեսության մարտահրավերների հետևանքները և էլ ավելի է կարևորվում մրցակցային միջավայրում, ինչով էլ բացատրվում են այս թեմայով հետազոտություն կատարելու կարևորությունն ու ահրաժեշտությունը: Գործարար միջավայրի առաջընթաց զարգացումը բախվում է մրցակցային միջավայրի այնպիսի նորմերի ու նորմատիվների համակարգերի կարգավորման խնդիրների հետ, ինչպիսիք են.

- աշխատանքային ռեսուրսների հաշվեկշռի մշակման հարաբերությունները, մրցակցային, հակամենաշնորհային, գործարար միջավայրը կարգավորող նորմեր ու նորմատիվներ,
- դրամական եկամուտների ու ծախսերի հաշվեկշռի հնարավորությունների ընդլայնման և ներդրումային միջավայրի կարգավորման նորմեր և նորմատիվներ,

- ընկերությունների կազմակերպաիրավական ձևերի և փոքր ու միջին ձեռնարկատիրության զուգակցված զարգացման կարգավորման նորմեր և նորմատիվներ,
- կենսամակարդակի որոշման և աղքատության մակարդակի գնահատման ու իջեցման նորմեր և նորմատիվներ,
- սահմանադրությամբ սահմանվող նորմերի և նորմատիվների համակարգեր,
- օրենսդրական ակտերի ու գերատեսչական նորմատիվ ակտերում սահմանվող նորմերի և նորմատիվների համակարգեր,
- տարածքային և տեղական ինքնակառավարման նորմեր ու նորմատիվներ և այլն:

Շուկայական տնտեսության առանձնահատուկ կողմերն արտահայտող միջոցառումների համակարգն ապահովում է տնտեսավարող յուրաքանչյուր սուբյեկտի հարաբերական ազատությունը, որն արտահայտվում է տնտեսության զարգացման ընթացքի վրա՝ պետության միջամտության աստիճանով և սեփականության տարբեր ձևերի հարաբերակցության տեսակարար կշիռների փոփոխությամբ: Հասարակության յուրաքանչյուր անդամի, գործարար միջավայրում տնտեսավարող յուրաքանչյուր սուբյեկտի գործունեության արդյունավետության կարևորագույն պայմանը գործելու և ընտրելու ազատությունն է՝ մրցակցային շուկաներից յուրաքանչյուրի գործարար միջավայրի առանձնահատուկ տարբերություններին համապատասխան: Այդ ազատությունը կարող է լինել որոշումների կայացման, մրցակցային շուկայի, գնային քաղաքականության և այլ նպատակների իրականացման հետ կապված:

Ազգային յուրաքանչյուր տնտեսության կամ առանձին երկրի ներսում տարբեր սուբյեկտների միջև ձևավորվող մրցակցության նորմատիվային կարգավորման նորմերն ու նորմատիվները տարբերվում են մակրոտնտեսական տեսանկյունից, մասնավորապես.

ա. ըստ մրցակցային շուկաների ներդրումային միջավայրի առանձնահատկությունների,
բ. ըստ գործարար միջավայրի ներքին ու արտաքին գործոնների կարգավորման առանձնահատկությունների,
գ. ըստ միջպետական կամ միջկառավարական փոխհամաձայնությունների մշակված ծրագրերի առանձնահատկությունների,
դ. ըստ գործող ֆիրմաների թվի կամ կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերի,
ե. ըստ առանձին ճյուղերի ու ենթաճյուղերի փոխկապակցվածության,
զ. ըստ միջճյուղային և ներճյուղային հնարավորությունների մրցակցային տեղաշարժերի,
է. ըստ առանձին ապրանքատեսակների անվանացանկի ու տեսականու,
ը. ըստ գների կամ գնային ու ոչ գնային մրցակցության,
թ. ըստ սահմանային ծախսերի ու եկամուտների հարաբերակցության փոփոխության,
ժ. ըստ սահմանային եկամուտների և սահմանային օգտակարության հարաբերակցության փոփոխության և այլն:

Այս դասակարգված ուղղությունները հնարավորություն են տալիս ոչ միայն ազգային տնտեսության նորմատիվային կարգավորման առանձնահատուկ հիմքերն ամրացնելու, այլև նպաստելու տնտեսավարման նոր պայմաններում բազմաթիվ ոլորտներում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման ամենաօպտիմալ տարբերակի կիրառմանը: Ընդ որում, դա հատկապես կարող է արտահայտվել ներպետական ու միջպետական մրցակցության կարգավորման գործընթացում՝ չբացառելով հասկացությունների նորովի ձևակերպման պահանջը: Այսպես, օրինակ, վաղ անցյալում ու խորհրդային տարիներին, ինչպես նաև շուկայական տնտեսության պայմաններում բազմաթիվ հասկացություններ տարբեր ձևով են սահմանվել՝ ելնելով գոյություն ունեցող միջավայրի առանձնահատկություններից: Ժամանակակից մարտահրավերների պայմաններում փոփոխվել են նաև մրցակցային միջավայրի և արդյունավետ գործելու ձևերը: Հատկապես այդ ձևերից յուրաքանչյուրի ազդեցության հետևանքները ձևավորում են նոր որակի կամ փոփոխման ենթակա մրցակցություն և մրցակցային միջավայր:

Մրցակցությունը երկրի տնտեսության ներսում և դրա սահմաններից դուրս սուբյեկտներից յուրաքանչյուրի վարքագծի կանոնների համակարգերի կիրառման փոխազդեցությամբ պայմանավորված շահերի զուգակցման քայլերի ամբողջությունն է: Մրցակցային միջավայրը տնտեսության սուբյեկտներից յուրաքանչյուրի վարքագծի կանոնների համակարգի կիրառման նոր պայմանների, հաջորդական քայլերի, առաջընթացի ապահովմանն ուղղված ռազմավարության իրականացման՝ զուգակցված և ծրագրավորված քայլերով կնքված համաձայնությունների ու առաջացած հակասությունների ամբողջությունն է, որը շուկայական տնտեսության պայմաններում բացահայտում և, միաժամանակ, հնարավորություն է տալիս տարանջատելու մրցակցային միջավայրի առավելություններն ու թերությունները՝ չբացառելով պետական նորմատիվային կարգավորման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Եվ պատահական չէ, որ մրցակցային միջավայրի ձևավորման ու մրցակցության զարգացման, շուկայական տնտեսության յուրաքանչյուր սուբյեկտի համար՝ ծախսային անհատական նորմերի ու նորմատիվների սահմանման տնտեսական ազատության ապահովման գործընթացները վերապահված են պետությանը: Դրանով էլ բացատրվում են տնտեսության սուբյեկտների շահերի զուգակցման նորմատիվային կարգավորման մեծ դերն ու նշանակությունը ոչ միայն հակամենաշնորհային օրենքների մշակման, ընդունման և գործադրման, այլև մրցակցային միջավայրում *գնային և ոչ գնային մրցակցության կանոնների* հաստատման միջոցառումների համակարգի միջոցով հակամենաշնորհային քաղաքականության իրականացման կարևորության մեծացման գործում: Անգամ ճգնաժամային իրավիճակների կարգավորման նպատակով իրականացվող տնտեսական զարգացման ու կայունացման քաղաքականության ռազմավարության մշակման հիմնաքարը համարվում է գնագոյացման քաղաքականությունը, որն էլ ավելի է խթանում տնտեսության նորմատիվային կարգավորման արդյունավետության բարձրացումը:

Ինչպես համաշխարհային, այնպես էլ ՀՀ տնտեսությունն այսօր չափազանց դինամիկ է, փոփոխական և, միաժամանակ, առավել հասանելի: Տնտեսական զարգացման

խնդիրներն առանձին երկրների քաղաքականության օրակարգից վերաճում են գլոբալ նպատակների, որոնց իրագործմանն են ուղղվում համաշխարհային կառավարման ինստիտուտների համախմբված ջանքերն ու ռեսուրսները: Աշխարհում զարգացման օրակարգերը ձևավորվում են այն մոտեցմամբ, որ առաջընթացի հստակ և համընդհանուր կիրառելի բանաձևեր գոյություն չունեն. ֆիզիկական սահմանափակումների աշխարհում նոր գաղափարների հայտնագործումն է, որ ապահովում է շարունակական տնտեսական աճ: Այս համատեքստում զարգացման պարադիգման ենթադրում է գիտելիքի կուտակում, նոր գաղափարների ստեղծում, առևտրայնացում ու տարածում, դրանց արդյունավետ յուրացման մրցավազք:

Միաժամանակ այսօր ականատես ենք լրջագույն վերափոխումների, երբ մակրոտնտեսական միջավայրում ի հայտ են գալիս նոր որակի վերաբաշխումներ ու նոր բնույթի ուժային կենտրոններ, շարունակում է աճել և փոխակերպվել զարգացող երկրների դերը, առավել սուր ինչեղություն են ստանում տնտեսական ու սոցիալական անվտանգության հիմնահարցերը, գլոբալացման գործընթացները հաշվեկշռվում են տարածաշրջանային միասնացող միավորների աճող ներգործությամբ, սրվում է արդյունքների նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը[1]: Յուրաքանչյուր երկրում մակրոտնտեսական նորմատիվային կարգավորման (ՄՆԿ) առանձնահատկությունները տարբերվում են այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են.

- մրցակցային միջավայրում ՄՆԿ իրականացմանը մասնակցող գործընկեր կառույցներ,
- մրցակցային միջավայրի մասնակիցների փոխհամաձայնեցված ՄՆԿ ապահովման հիմքեր,
- գործարար միջավայրի Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ) գործառույթներ ու խնդիրներ,
- բազմակողմ համագործակցության շրջանակներում ՏՄՊՊՀ համագործակցության և նպատակային ծրագրերի իրականացմանը մասնակցող միջազգային կազմակերպություններ:

Նշված համատեքստում է ձևակերպվում Հայաստանի տնտեսական զարգացման օրակարգը՝ պահանջելով, նախ և առաջ, նոր պայմաններում երկրի արտադրական կարողությունների հստակ գնահատում, ռեսուրսների նպատակային ուղղորդում ու արդյունքների կողմնորոշված կառավարում, արտաքին ցնցումներին դիմակայելու կայուն երաշխիքների ձևավորում:

АНАИТ БАГДАСАРЯН

МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ НОРМАТИВНЫЕ СПЕЦИФИКАЦИИ УРЕГУЛИРОВАНИЯ В КОНКУРЕНТНОЙ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЕ

Ключевые слова: *конкуренция, конкурентная окружающая среда, многостороннее сотрудничество, экономи-*

[1] www.gov.am, ծրագրերի բաժին

ческое сотрудничество, защита конкуренции, антиконкурентная деятельность

Изучение макроэкономических нормативных регуляторных особенностей в конкурентных средах позволяет не только разрабатывать способы реализации мер по улучшению бизнес-среды, но и оценивать систему рычагов для определения производительности. Результаты последовательного и универсального мониторинга улучшаются регулирующими органами по конкурентоспособности, и новое освещение может появиться в нормативной базе для деятельности участников общей структуры экономики

ANAHIT BAGHDASARYAN

MACROECONOMIC NORMATIVE SETTLEMENT SPECIFICATIONS IN COMPETITIVE ENVIRONMENT

Key words: *competiton, competitive environment, multilateral cooperation, economic cooperation, competition protection, anti-competitive activity*

Studying the macroeconomic normative regulatory peculiarities in competitive environments enables not only to design the ways to implement business environment improvement measures but also to evaluate the leverage system for detecting productivity. The results of consistent and versatile monitoring are improved by competitiveness regulatory bodies, and new lighting may emerge on the regulatory framework for the activities of the participants in the overall structure of the economy.

ՎԱՀԵ ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հիմնաբառեր. *ճգնաժամ, կառավարում, պարբերաշրջան, փափանում, կարգավորում, անկայունություն, կոնյունկտուրա, մոդել*

Ճգնաժամային կառավարումը իրականացվում է անընդհատ՝ տնտեսության կայուն, անկայուն և ճգնաժամային իրավիճակներում: Պետության կողմից իրականացվող հակապարբերաշրջանային քաղաքականությունը տնտեսական, քաղաքական գործիքների օգտագործումն է՝ տնտեսական կոնյունկտուրային փափանումները մեղմելու նպատակով: Տնտեսական պարբերաշրջանների փափանումները մեղմելու նպատակով, ակտիվ տնտեսական քաղաքականություն իրականացնելու համար, նախ և առաջ պետք է փիրապետել